

ՐԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԻ ՏԱՂԵՐՈՒՄ

ՆԱԶԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նաղաշ Հովնաթանի ստեղծագործության լեզուն մեծ լափով սնունդ է առել XVII—XVIII դդ. ժողովրդախոսակցական լեզվից և հետաքրքիր է վաղ աշխարհաբարի միտումների տեսակետից: Չարենցի բնութագրամամբ, Հովնաթանի լեզուն հնօրյա ճառարիկ մարդու արդար լեզունն է՝

Որ կարկաշելով հասած մինչև լայն

Մեր հորձանոսեր տաղերգական,

Ձուլվելով երգին հովնաթանյան

Եվ սաչաթնովյան խաղերին այն—...

խսկական ակունք է դարձել «Մեր նոր արվեստի քերթողական...»¹:

Ժողովրդախոսակցական բառամթերքի այլևայլ ձևերի ու տարրերի կողքին՝ Հովնաթանի լեզուն հարուստ է և հարադրական բարդություններով, այդ թվում՝ բայական հարադրություններով: Փորձենք դասակարգել նրա օգտագործած բայական հարադրությունները և պարզել դրանց իմաստային, ոճական դրոշ յուրօրինակությունները:

Բայական հարադրությունները, ինչպես հայտնի է, հարադրով և բայական բաղադրիչով կազմված բարդություններ են; որոնք տարբերակելով, սովետահայ լեզվաբանությունն ընդունում է հարադրավոր, զուգադրական և պատճառական հարադիր բայեր: Առաջինները հարադրով և բայական բաղադրիչով կազմություններ են, որոնց հարադիրն առանձնացվում է ըստ խոսքիմասային պատկանելության և բառակազմության: Զուգադրական բայերի բաղադրիչները բայեր են, իսկ պատճառականը կազմված է անորոշ դերբայով և տալ բայով:

Ն. Հովնաթանի տաղերում առավել մեծ թիվ են կազմում հարադրավոր բայերը, ինչ խոսք, պայմանավորված ժողովրդական երգի ու տաղի պարզ ու անպաճույճ շարակարգության ազդեցությամբ: Հարադրի կառուցվածքային տիպով՝ ըստ խոսքիմասային պատկանելության, դրանք կարելի է խմբավորել՝ գոյական, ածական, դերանուն, թվական, մակբայ հարադիրներով, ձայնարկությամբ և բնածայնական բառերով, և ապա՝ կախյալ բայարմատներով ու բառերով կազմված հարադրական բայեր: Թվարկված հարադիրները ընդհանուր օրինաչափությամբ հանդես են գալիս անփոփոխ, արտահայտվում քերականական որոշակի ձևով: Փոփոխվում-խոնարհվում է միայն բայական բաղադրիչը: Եվ, սակայն, գոյական հարադրի դեպքում (որի կիրառությունները տաղերում բազմաթիվ են), գոյականը ձևականորեն պահպանում է իր հոլովական իմաստները, արտահայտվելով՝

ուղղականով և հայցականով, ինչպես՝ աչբերը սեանալ, աշխարհ/ը/ բողնել, բալայ անգանել, գիրկ ածել, քաղաքիք տեսնել, իշտան անել և այլն (հայցական հոլովով դրված գոյական հարադիրը կատարում է և՛ խնդրային, և՛ պարագայական պաշտոններ):

սեռական-տրականով՝ բանին կենալ, գլխին տալ.

բացառականով, ինչպես՝ դարդէն ճալիլ // մաշել, ճոգի-ճաւաւէ ճանել, ձեռաց զնալ // երթալ // տալ և այլն.

գործիականով՝ աչբաւ-ունեաւ անել, աշօք անել, գաւալով տալ և այլն: Գոյական հարադիրն արտահայտվում է նաև՝

¹ Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1968, էջ 303:

1) կրկնավոր հարադրությամբ, ինչպես մաս-մաս անել, կուռն-կուռն տալ, ծափս-ծափի հարկանել և այլն.

2) բաղճյուսական հարադրությամբ՝ աչք և ունք լարել, ուշ ու խելքը գր-նալ // տանել, հիմն-հատակ լինել, սարեր-դաղ ընկնել և այլն: Բաղճյուսա-կան հարադրության մեկ այլ տարբերակում գոյականը զուգորդվում է ածա-կան հարադրով, ինչպես՝ բոհտան ու զուր անել, եղ-ճենճոտ լինել, իսկ ու բան-գի լինել, սուր և սով լինել և այլն: Միայն մեկ անգամ օգտագործվել է նաև եռաբաղադրիչ ուշ ու խելք ու միտքը տանել բաղճյուսական հարադրությունը՝ «Դու իմ ուշ ու խելք ու միտքն ես տարել»²: Մինչդեռ նշված առաջին երկբա-ղադրիչ հարադրությունը (ուշ ու խելք) հաճախ է գործածվում: Պետք է նշել նաև իբրև հարադիր հոգնակի գոյականների գործածության փաստը, ինչպես՝ աչքերը սևեակալ, դարդերը տաշել, սարեր-դաղ ընկնել և այլն:

Չափածո խոսքը միշտ էլ պահանջ ունի համառոտագրության, իսկ կրկ-նավոր ու բաղճյուսական հարադրություններով հարադրական բայերը դրա համար ընձեռնում են լայն հնարավորություն՝ կարճառոտ սողում միտքը, հու-զապրումը միանգամից մարմնավորելու իմաստային երկու-երեք տարբերա-կով:

Գոյականով հարադրավոր բայերի կողքին համեմատաբար քիչ են ածա-կանով հարադրվածները մեծ մասամբ՝ պարզ և ածանցավոր ածականներով՝ ազատ առնել // անել, անաշ անել // լինել, դատարկ նստել, ուրախ լինել, ան-պակաս լինել, անհար մնալ և այլն. կան նաև մի քանի բարդ ածականներով՝ արինշաղախ անել, բարեխոս լինել, ժամասեր լինել, մեղադիր լինել, վրեժ-խնդիր լինել, փառափառ անել, փառէփառ տալ:

Առհասարակ Հովնաթանի տաղերում ածական-մակդիրային տարրը լայն-քան էլ ծանրակշիռ չէ, ինչ տեսնում ենք նրա հաջորդներից Սայաթ-Նովայի ստեղծագործության մեջ, և դա երևում է նաև նրանից, որ սակավ են օգտա-գործված ածականով հարադրված հարադրավոր բայերը: Մյուս կողմից՝ չունի բարդ ածականների լայնպիսի կուտակումներ, ինչպիսիք տեսնում ենք նարե-կացու մոտ: Հատկանիշներ, որոնք գալիս են վկայելու Հովնաթանի բանաս-տեղծական մտածողության և ոճի հարազատությունը ժողովրդական ակունք-ներին:

Դերանուններից որպես հարադիր օգտագործված է միայն իրաբ փոխա-դարձ դերանունը: «Սուտ բաներ իրաբ կարկառին» (101), «Դատարկ վախտ, կասեն էրկոցն,— իրաբ չի տաք օրոդոցն» (104): Ուշադրության է արժանի դարձվածային փոխաբերական ճշմարիտ արժեք ունեցող առաջին տողը: Այս-տեղ իրաբ կարկառել բայական հարադրությամբ փոխաբերորեն առարկա-լացվում, տեսանելի է դառնում վերացական լայնպիսի հասկացություն, որ-պիսին է սուտը, սուտ բանը: Այս երևույթը բնորոշ է ինչպես ժողովրդական խաղերին, երգերին, այնպես էլ առած-ասացվածքներին. ժողովրդական լեզ-վամտածողությանը առգրավից 'նման պատկերավոր փայլատաղանթները քիչ չեն Հովնաթանի ստեղծագործության մեջ:

Թվական հարադիրը նույնպես հանդիպում է մեկ անգամ, մինչև այժմ էլ լայնորեն օգտագործվող խօսքը մէկ անել հարադրության մեջ «Քո խօսքն ինձ հետ մէկ արայ» (38):

Մակբայով հարադրավոր բայերից գտնում ենք բավականաչափ գործա-ծություններ. դէմ տալ, դուրս գալ // ելնել // տալ // հանել, մէջ բերել // ընկնել, /յ/ ետ բանալ // բացել // տալ, շուռ ածել // դալ // տալ, շուրջ գալ, վեր առնել // գցել, տակը գցել // դնել³ և այլն, որոնք մեծ մասամբ մինչև օրս էլ պահպա-նել են իրենց իմաստային կենդանի հնչեղությունը: Ինչպես տեսնում ենք, քաղված օրինակներում հարադրվող բաղադրիչները երկուսից չեն անցնում:

² Ն. Հովնաթան, Բանաստեղծություններ, Երևան, 1951, էջ 41 (այսուհետև՝ էջերը կտրվեն տեքստին կից, փակագծերում):

³ Հստ Մ. Արեղյանի «Տեղ, տակ, հետ բառերը բայերի հետ գրվում են հոգով» (Երկեր, 2, Երևան, 1974, էջ 139):

Դեռ գալիս է մակրայտայ կաղապարի կառուցվածքային տիպի ընդհանուր բնույթից: Նման կապակցությունները շատ սակավ դեպքերում են լինում ծավալուն, որքանով մակրայը, առհասարակ, հազվադեպ է լրացում ընդունում:

Պ. Բեդիրյանի առանձնացրած ռայտկապ-կապի խնդիր⁴ կառուցվածքով, տաղերում գործածված են կրակի մէջ ընկնել, գայլի ճեռ քառ անել // բռնել, սրտի մէջը դաղել հարադիր բայերը:

Ձայնարկությամբ և բնաձայնական բառերով հարադրված հարադրավոր բայերին բայական բաղադրիչ են ծառայում գերազանցապես անել, կանչել, տալ, փռել բայերը, ինչպես՝ ախ փռել, ախ-վախ տալ, երանի տալ, գոռնչ կանչել, վայ տալ և նման այլ հարադրական բայեր:

Կախյալ բայարմատներով և բառերով հարադրված բայերից հաճախակի են օգտագործված նշանց տալ-ը և մախկ անել-ը: Սրանց կողքին հանդիպում են և նման կազմություններ՝ անց կենալ, բաց թողնել, դադ անել, թառկ անել // տալ, ցույց տալ, փռլ գալ և այլն, որոնք կայունացած իմաստներով մինչև այժմ էլ գործածական են ինչպես բարբառներում, այնպես էլ գրական հայերենում:

Մ. Աբեղյանի հավաստմամբ, հայերենում հարադիրն ու բայը «կարող են հաճախ մեկ բառով փոխանակվել», ստանալով «մեկ բառի նշանակություն»⁵: Այս օրինակափոխությունը տեսնում ենք նաև Հովնաթանի տաղերում, որտեղ նրման բառազույգերը օգտագործված են համարյա հավասար չափով: Սեկայն դրանց շարքում ակնհայտորեն տարբեր է գոհութիւն տալ—գոհանալ, գովասան (f) տալ—գովել, դադ անել—դադել, պար գալ—պարել, վար անել—վարել, փռիման լինել—փռլ/ի/մանել (զղջալ բայի զուգահեռ կիրառությամբ) չուլգերի գործածությունը: Գերիշխողը համադրական ձևերն են, որոնք կարելի է համարել աշխարհաբար-գրական լեզվի որոշակի նախանշան:

Ուշագրավ են այն բայերը, որոնց հարադիրը փոխառյալ բառ է՝ արարերենից, թուրքական լեզուներից, պարսկերենից, ինչպես՝ աման, դադը, ետնուդ, էֆերիմ, զայիմ, մուլվաթ, բազի և այլն: Փոխառյալ բառերով հարադրավոր բայերից մի քանիսը կազմված են փոխատու լեզուների նմանությամբ, այն է՝ բայական նույնիմաստ բաղադրիչով: Բերենք այդպիսիք, նշելով համարժեքները փոխատու լեզվում. բայիմ աննել—թրք. talim etmek «սովորեցնել», շարթ* անել—թրք. şart etmek «պայման անել», փայ անել—թրք. pay etmek «բաժանել», քամամ* լինել—պրսկ. تمام شدن «վերջանալ (ցնել)» (տաղերում՝ ամբողջ անալ իմաստով. «Թող համբուրեմ, որ իմ սէրն լինի քամամ» (20, 30, 31), դարդ անել—պրսկ. درد کردن «հիվանդանալ, ցավ զգալ», քամաշա անել—պրսկ. دامن کشیدن «նայել» և այլն:

Առկա են և այնպիսի հարադրավոր բայեր, որոնցում փոխառյալ է և՛ հարադիրը, և՛ բայական բաղադրիչը: Այդպիսիք հանդիպում են միայն հայերեն բնագրի օտարալեզու տողերում: Ամենայն հավանականությամբ դրանք օգտագործված են հանգը պահպանելու համար և, կարելի է ենթադրել, դարաշրջանի աշուղական երգերի ազդեցությունն են:

Ինչ վերաբերում է զուգադրական բայերին, ապա սրանց զուգադրվող ընդհանրական իմաստով միակցված բաղադրիչները ընդունված կարգով գրվում են միության գծիկով կամ էլ հարադրվում առանց կետադրական նշանի: Հովնաթանի տաղերում որոշակիորեն գերակշռում է վերջինը, բայց հանդիպում են և ստորակետով հարադրական բայեր, որոնցում առանձնացվում են բացահայտ զուգադրական բայերը. «Դու գաս, անց կենաս մեր դուռը» (65), «Աստուած սիրէ՞՞ զքնացէ՞ք, տեսէ՞ք, թէ իմ եարըն տա՞ն ալ, նրբամ, աղաչեմ, բալքի ըռահմ անի, դուռըն բանայ» (24), «Բեզ ի՞նչ եմ արել, որ ինձ թափկել ես, մոռացել...»

4 Պ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի գործածարանություն, Երևան, 1973, էջ 193:

5 Մ. Աբեղյան, Երկեր, 2, Երևան, 1974, էջ 137:

* Առաջանշանով հարադիրները արաբական ծագմամբ բառեր են:

(30) և այլն: Ըստ որում, երկրադարիչների կողքին հանդիպում են նաև եռա-
բաղադրիչ զուգադրական բայեր. նման դեպքերում արդեն հարադրովող բայերն
ունենում են եղանակային տարբեր պատկանելություն: Սովորաբար առաջին և
երկրորդ բաղադրիչները լինում են հրամայական, երրորդը՝ ըղծական եղանակի
բայեր, ինչպես՝ «Այ տէր, բեր լից խմեմք ջամն» (145): Կամ էլ՝ երրորդ բաղա-
դրիչը պատճառական կերպի բայ է. «Կարասներն բաց, եկ՝ խապար բեր, մեզ
ուրախացուր, Սուրահիքն տար, շուշէքն լից բեր, թասով խմացուր» (160): Եվ
երկու դեպքում էլ ճիշտ և ճիշտ ան կազմություն-կառուցվածքն է, ինչ տեսնում
ենք մեթոդյա ժողովրդախոսակցական լեզվում:

Հուգադրական բայերի բաղադրիչները լինում են նաև հարադրական կազ-
մություններ, ինչպես նստել թամաշա անել, գնալ երկիր պագանել, խմել բոց
դառնալ, վեր կենալ դուս ելնել և այլն: Արդպիսիք բանաստեղծական հյուս-
վածք են ներմուծվում բոլոր այն դեպքերում, երբ անհրաժեշտ է լինում իմաս-
տավորել մեկից մյուսը փոխանցվող շարունակական գործողություն:

Այլ. Մարգարյանը գտնում է, որ միջին հայերենում «...նվազում են գրա-
բարի համար սովորական անցյալ դերբայի և դիմավոր բայի հարադրությամբ
կազմված ձևերը»⁶, էնպես այդ ձևերը շարունակում են նվազել և հետագայում,
և բնորոշ է, որ Հովնաթանի տաղերում հանդիպում է գրաբարյան կազմության
միայն երեք դեպք: Դրանցից երկուսը վերը նշված բնույթի են՝ «Ժամհարն առեալ
զնաց, գինովցաւ, հաւն գողանալ ետուր» (141), «Բո սիրուդ ճալեալ մաշեցայ,
դու էլ շես խապար» (45), երրորդը կազմված է զույգ անցյալ դերբայների հա-
րադրումով՝ «Յաշ և յահակ մարդիք կացեալ Տաբե/ա/ իւրեանց գուռն ցու-
ցեալ» (187):

Դառնալով պատճառական հարադիր բայերին, նշենք, որ դրանցից Հով-
նաթանի տաղերում գործածված են երեքը. այն է՝ գրել տալ «Թուման լաւ մարդ
այ, Հիմի գրել տայ, դատաստանին կարդայ» (131), գողանալ տալ «Ժամհարն
...հաւն գողանալ ետուր» (141), կռնչել տալ «Կռնչել տամ տէր Յարու-
թին(ն)» (187): Տալ բայական բաղադրիչն ամենուրեք ետադաս է: Որոշակիո-
րեն նկատելի է այն, ինչ արձանագրել է Ալ. Մարգարյանը. «...ուշադրավ պատ-
կեր է ներկայացնում միջին հայերենը, որտեղ ի տարբերություն գրաբարի, գե-
րիշխողը... նախադաս անորոշի և ետադաս տալ բայի համադրությամբ կազմը-
ված ձևերն են»⁷: Նման վերափոխությունը ժողովրդախոսակցական լեզվի օ-
րենքներով հունավորվող աշխարհարարի ընդհանուր օրինաչափություններից է,
որի հետագա խորացման վկայություններից մեկն էլ Ն. Հովնաթանի տաղերում
օգտագործված բայական հարադրությունների կառուցվածքային բնույթն է՝
դարձվածա-ոճական յուրօրինակությամբ:

Այս առումով հետաքրքիր է անդրադառնալ նաև տաղերում տեղ գտած հա-
րադրական բայերի դարձվածաբանական արժեքին, դրանց իմաստա-ոճական
առանձնահատկությունը:

Դարձվածային հարադրական բայերի բաղադրիչները միասին վերցրած
արտահայտում են յուրօրինակ իմաստային նշանակություն՝ բանաստեղծական
հյուսվածքում վերաճելով պատկերավոր ձևերի: Անշուշտ, հենց այդ էլ նկատի
ունենալով, Ա. Այտընյանն իր ժամանակին հարադրական բայերը համարել է
«ոճեր»⁸:

Լեզվի հարստությունը հարադիր բայերով ինքնին լեզվի «երկարատև զար-
գացման» վկայություն է, որը և շեշտում է Ալ. Մարգարյանը՝ քննության առ-
նելով հարադիր բայերը իս. Աբովյանի ստեղծագործության մեջ: Դրանք լեզվին
հաղորդում են «առանձին ճկունություն, կենսունակություն, հրապույր» մի կող-

⁶ Ալ. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, էջ 317:

⁷ Նույն աեղում, էջ 438:

⁸ Ա. Այտընյան, Փնական քերականութիւն աշխարհարար-կամ արքի հայերէն լեզուի,
Վիեննա, 1866, էջ 317:

մից, պատկերավոր մտքեր արտահայտելու լայն հնարավորություն՝ մյուս կողմից»⁹:

Այս տողերը նույնությամբ կարելի է վերագրել Ն. Հովնաթանի տաղերում օգտագործված հարադիր բայերին: Ինչպես Աբովյանի, այնպես էլ Հովնաթանի լեզուն հարուստ է ժողովրդախոսակցական լեզվից եկող հարադրություններով ու դարձվածներով, որոնք բնութագրվում են փոխաբերական-պատկերավոր լայն հնարավորությամբ, խոհի, հուզապրումի, վերաբերմունքի երանգներ ու նրբերանգներ հյուսելու ճկունությամբ: Որոշ նմուշներով տեսնենք, թե բանաստեղծական տողին ինչպիսի հրապույր ու հնչողություն են հաղորդում, օրինակ, արիւն անել, սև անել (գլխին), զարգեր տաշել, պատաճափ մտնել, բոց դառնալ, ջրկառն այրել, խոզին հաճել, սիրտը երել և այլ դարձվածային հարադիր բայերը: Ուշագրավ է, որ թվարկվածներից արիւն անել և սիրտը երել հարադիր բայերը հանդիպում են հենց կողք-կողքի. «Շա՛տ մարդոյ սիրտ երել, արիւն ես արել...» (16), «Արիւն անելու մի՞տք ունես, հագել ես կարմիր սարասար» (32): Ինչպես այս, այնպես էլ փոխաբերորեն նորախմաստավորված նման սեղմ դարձվածներով միանգամից պատկերվում է թե՛ բանաստեղծի, թե՛ նրա սիրած էակի նկարագիրը, վիճակը, վերաբերմունքը. «Ալքերդ ծանր շուռ կածես, հոգիս կու հանես» (45), «Իմ սրտին կու տաս սրած դանակով, Զիկարս այրեցիր անշէջ կրակով» (49), «Ալւերըս դարձել այ արիւն, Թէ ինձ ո՞վ կու բերէ խաբար» (53), «Նաղաշին սիրտն արիւ դուման» (76) և այլն:

Սիրտ, արյուն, ջրկար, հոգի, աչք, դուման... գոյականներով և վերը հիշատակած բայերով կազմված փոխաբերական նման և համանման դարձվածների հետագայում լայնորեն հանդիպում ենք Հովհ. Թումանյանի և Ալ. Խաչակյանի ստեղծագործություններում, որ վկայում է հարադիր բայերի և դերանց դարձվածաբանական դերի ու արժեքի կենսունակությունը ժողովրդախոսակցական լեզվում:

Փոխաբերական առումով օգտագործված հարադիր բայերով դարձվածներ ենք գտնում նաև Ն. Հովնաթանի երգիծական տաղերում, ինչպես՝ «Հիմա կոխեմ ձեզ մէջ ցխին, Ամեն սև անեմ ձեր գլխին» (98): Մեկ այլ դեպքում՝ «Ո՛ւր է հանց խօճայ, որ դայրաթ քաշի, Ընկած փէշաքրին դարդեր տաշի» (80), ապա՝ «Չնի շատ խմէ՛ք դառնափ բոց... Ձեր ծնողաց սիրտն շինէ՛ք խոց» (188): Դարդեր տաշել, խմել դառնալ բոց, սիրտը շինել խոց—սրանք արդեն, թվում է, հեղինակի ստեղծած դարձվածային միավորներն են՝ լիցք առած հանրության այն նույն լեզվամտածողությունից, որով սնվել է հայոց բանաստեղծությունը, ինչպես Հովնաթանից առաջ, այնպես էլ մինչև մեր օրերը:

Ինչպես վերը բերված բոլոր, այնպես էլ այս վերջին դեպքում, բայը, ի տարբերություն ազատ կապակցություններում ունեցած իր նշանակության, ամենուրեք կրում է այլաբերական երանգ: Հենց դա էլ հնարավորություն է ընձեռում բառային տարբեր միջավայրում կամ իրադրության մեջ միևնույն երեւոյթը բնութագրել տարբեր հարադրական բայերով. այսպես՝ «Խենթանալ, ցնորվել» իմաստն արտահայտելու համար բառային այլևայլ իրադրության մեջ Հովնաթանն օգտագործում է խելքը առնել // գնալ // տանել, ուշ ու խելքը գնալ // տանել: «տանջել, շարշարել» իմաստով՝ ճոգին հաճել, ջրկառն այրել, սիրտը այրել // դաղել // վառել, փափաք տալ հարադիր բայերը:

Դարձվածային գերադաս բառերի իմաստային դաշտերը բնութագրելիս Պ. Բեդիրյանն առաջին հերթին նշում է մարդկային մարմնի մասերի անուններով կազմվածները¹⁰: Դա նույնությամբ տեսնում ենք Հովնաթանի տաղերում, որտեղ ամենից ավելի օգտագործված են խելքը ու սիրտ, ապա՝ աչք, դուրս, ականք, ձեռք բառերով հարադրված հարադրավոր բայերը: Սա միանգամայն հասկանալի է, քանի որ տաղը քնարերգական ժանր է, իսկ քնարեր-

⁹ Ա. Մ արգարյան, Խ. Աբովյանը և աշխարհաբարը, Երևան, 1958, էջ 155:

¹⁰ Պ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, 1973, էջ 91:

գության առարկան ամենից առաջ մարդն է: Միաժամանակ այստեղ ևս հարադրավոր բայերի «գլխավոր ուժը» գոյականներն են: Սակայն, ինչպես ավելացնում է Պ. Բեդիրյանը, «կարելի է առանձնացնել մի խումբ բայեր, որոնք ամենաակտիվ մասնակցությունն են ունենում դարձվածների կազմությանը. անել, լինել, տալ, գնալ, բերել, տանել, բաց անել, ընկնել, մնալ, թողնել, դնել»¹¹:

Արդի հայերենից թվարկվող այս 11 բայերից 10-ը նույն ակտիվ դերով հանդես են գալիս Հովնաթանի տաղերում օգտագործված հարադիր բայերում ու դարձվածներում: Դա նշանակում է, որ թվարկված բայերը այդ դերն արդեն նվաճած են եղել Հովնաթանի ապրած ժամանակներում (անշուշտ, դրանից էլ առաջ), և իբրև կայուն կառուցվածքներ XVII դարի վերջերից հաստատված են մեր լեզվում՝ հենքի կողքին, հարստանալով նաև նորակազմություններով:

Ն. Հովնաթանի տաղերում օգտագործված գրաբարյան կամ գրաբարատիպ կառուցվածքի հարադրավոր բայերը գործածության տեսակետից զիջում են աշխարհաբարյան ձևերին: Գրաբարյան նախդրավոր հարադրական բայերից են՝ առ Քրիստոս երթալ, յանձն առնել (փոխն. առնուլ), յերկինս համբառնալ, ի գլուխ հանել, ի գործ ածել, ի բուն լինել և այլն: Սրանց կողքին նշենք և ազատ առնել, երկիր պագանել (// երկրպագել), մեղաց դառնալ, պատասխանի տալ և այլ հարադիր բայերի առկայությունը:

Ինչպես աշխարհաբարյան, այնպես էլ գրաբարյան հարադիր բայերի կազմությանը զորոժույն մասնակցություն է բերում լինել բայը, որը կիրառված ենք գտնում ներկայի՝ հաստատ լինիք, երկրորդ ապառնու՝ աբժան լիցիս // եղիցին, անպակաս լիցի, բուն հրամայականի՝ ողջ լեռաք, ուրախ լեռաք ձևվերով:

Ինչպես լինել բայի, այնպես էլ այլ դեպքերում, շատ հաճախ գրաբարյան կամ գրաբարատիպ ձևերին զուգահեռ գործածվում են աշխարհաբար ձևեր. այսպես. կան և՛ պատասխանի տալ, և՛ պատասխան տալ ձևերը: Ընկնել բային զուգահեռ օգտագործվող անկանիլ բայը հանդիպում է բալայ անգանել, թալակ անկանել հարադիր բայերում: Հետաքրքիր է պատուհաս ընկնել // բալայ անգանել հարադրավոր բայերի գործածության փաստը, ինչպես և գրաբարյան բայի կիրառությունը փոխառյալ բալայ բառի հարադրումով:

Գրաբարատիպ կառուցվածքով ձեռաց երթալ, ձեռաց տալ ձևերին զուգահեռ գտնում ենք ձեռաց գնալ ձևը: Կարելի է ենթադրել, որ գրաբարյան հոգնակին հասկացվել է եզակի նշանակությամբ (հմմտ. ժամանակակից՝ ձեռքից գնալ) և, հավանաբար, այստեղ ևս գործ ունենք լեզվական այն իրողության հետ, ինչ շրթունք բառի համար նկատել է Հ. Պետրոսյանը, արձանագրելով, թե XVII—XVIII դդ. հաճախական էր նման «եզականաձև-հավաքականի» գործածությունը¹²:

Այսպիսին է բայական հարադրությունների ընդհանուր պատկերը Ն. Հովնաթանի տաղերում, որը լեզվական այլևայլ տարրերի հետ միասին վկայում է ժողովրդախոսակցական լեզվի հիմքի վրա աշխարհաբարի որոշակի հունավորումը XVII դ. վերջերին և XVIII դ. սկզբներին:

¹¹ Նույն տեղում, էջ 92:

¹² Հ. Պետրոսյան, Գոյականի թվի կարգը հայերենում, Սրեան, 1972, էջ 249—250:

СОСТАВНЫЕ ГЛАГОЛЫ В ПЕСНЯХ НАГАША ОВНАТАНА

НАЗИК ОГАНЕСЯН

Резюме

Язык произведений Н. Овнатана, впитавший в себя богатство армянской разговорной речи, представляет интересную картину, отражающую тенденции развития раннего новоармянского литературного языка (конца XVII—начала XVIII вв.). В языке Овнатана использованы лексика и словосочетания, характерные для разговорной речи. В частности, глаголы с аналитической конструкцией, а также казуативные глаголы типа գոհանալ տալ, գրել տալ. В песнях Н. Овнатана большей частью употреблены аналитические глаголы разной словообразовательной структуры, компоненты которых отличаются разной категориальной принадлежностью (существительное, прилагательное, местоимение, числительное, наречие, междометие и звукоподражательные слова, глагольные корни). В языке Овнатана встречаются также копулятивные глаголы с двумя, и, реже, тремя компонентами (բերել լցնել լսել, գալ խորաբ բերել ուրախացնել) .

В статье обращено внимание также на фразеологическую значимость составных глаголов.